ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<29>> ապրիլի 2013թ. N: 105-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ <<ԲԵՌԼԻՆ>> ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱԳԻԿ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԳԱԳԻԿ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 70-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու «Բեռլին» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» որոշումը, եզրակացությունը և Գագիկ Ալթունյանի 2013 թվականի ապրիլի 26-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2013 թվականի ապրիլի 29-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու «Բեռլին» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար Գագիկ Ալթունյանի լիազորությունները:
2. Գագիկ Ալթունյանին 2013 թվականի ապրիլի 29-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու «Բեռլին» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետով կնքել աշխատանքային պայմանագիր:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝